



**ԵՐԵՎԱՆԻ ՄԻԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ**

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ.

060621238, 2-38, [ss@ysmu.am](mailto:ss@ysmu.am)

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ԹԻՎ 1  
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԲՀ) կանոնադրության 55-րդ կետը, ԵՊԲՀ գիտական խորհուրդը, լսելով ռազմաբժշկական կրթագիտական կենտրոնի տնօրեն, բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գալստյանի և գիտքարտուղար Տ. Ավագյանի կողմից ներկայացված հաղորդումները,

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. ԵՊԲՀ-ի ռազմաբժշկական ֆակուլտետի կուրսանտների համար սահմանել «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր, ավագ լեյտենանտ Մերուժան Ստեփանյանի անվան կրթաթոշակ՝ իրավաբանական բաժնին հանձնարարելով գիտական խորհրդի հաջորդ հերթական նիստին ներկայացնել գիտական խորհրդի 2019 թվականի մարտի 27-ի «Անվանական կրթաթոշակների մասին կանոնակարգի» սույն որոշումից բխող համապատասխան փոփոխությունները և լրացումները (20-01-01-01):
2. Հաշվի առնելով ֆարմակոլոգիայի, հոգեբուժության, ֆիզիկական դաստիարակության, հյուսվածաբանության, անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի, սրտաբանության, օտար լեզուների ամբիոնների վարիչների և ամբիոնների պրոֆեսորների ընտրության հաշվիչ հանձնաժողովի հաղորդումը, հաստատել ընտրությունների հետևյալ արդյունքները՝
  - 1) որպես ֆարմակոլոգիայի ամբիոնի վարիչ ընտրված համարել Մարինե Բալասանյանին (20-01-01-02),
  - 2) որպես հոգեբուժության ամբիոնի վարիչ ընտրված համարել Կարինե Թաթարյանին (20-01-01-03),
  - 3) որպես ֆիզիկական դաստիարակության ամբիոնի վարիչ ընտրված համարել Հարություն Թամիրյանին (20-01-01-04),



- 4) որպես հյուսվածաբանության ամբիոնի վարիչ ընտրված համարել Կարմեն Սահակյանին (20-01-01-05),
  - 5) որպես անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի վարիչ ընտրված համարել Իրինա Մալխասյանին (20-01-01-06),
  - 6) որպես սրտաբանության ամբիոնի վարիչ ընտրված համարել Համայակ Սիսակյանին (20-01-01-07),
  - 7) որպես օտար լեզուների ամբիոնի վարիչ ընտրված համարել Հասմիկ Հովհաննիսյանին (20-01-01-08),
  - 8) որպես ֆարմակոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր ընտրված համարել Էլմիրա Ամրոյանին (20-01-01-09),
  - 9) որպես հյուսվածաբանության ամբիոնի պրոֆեսոր ընտրված համարել Տաթևիկ Ավագյանին (20-01-01-10),
  - 10) որպես հյուսվածաբանության ամբիոնի պրոֆեսոր ընտրված համարել Մարինա Թաթոյանին (20-01-01-11):
3. Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝

Բ.Գ.Դ., ՊՐՈՖ. Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Բ.Գ.Դ., ՊՐՈՖ. Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ

